# ՀԱՅԿԱՁՈՐ - ԿԱՐՄԻՐ ՎԱՆՔ

Այս գյուղի անունը գրականության մեջ հիշատակված է նաև Ղոշավանք, Ղըզըլքիլիսա ձևերով:

Գյուղը վերջին տասնամյակներում տեղափոխվել է քիչ վերև, իսկ հնում եղել է ձորամիջի տափարակի վրա՝ Ախուրյանի ափին ավելի մոտ, ուր մնում են տների բազմաթիվ ավերակներ, որոնց մեջ նաև գրեթե ամբողջ մնացած Կարմիր վանք կոչվող եկեղեցին, որի անունով հնում կոչվում էր նաև գյուղը:

Եկեղեցին կենտրոնագմբեթ շենք է և կանգուն, որից պրակում տեղ է գտել 4 արձանագրություն:

***12. ԿԱՐՄԻՐ ՎԱՆՔ ԵԿԵՂԵՑԻ***. հարավային պատին, արտաքուստ, 11 տող.



ՅԱՄՍ ԱԾ ԱՊԱ⌈***ՏԻՒ ԵՒ ՀՈԳԵՒՈՐ Տ⌊ԵԱՌ⌋Ն ԽԱՉԿ***⌉Ա ԵՒ Ի ԹԱԳԱՒ/ՈՐՈՒԹԵԱՆ
⌈ՍՄ⌉ԲԱՏԱ ԲԱԳՐԱՏՈՒՆՈՅ ՇԱՀԱՆՇԱՀԻ, ԿԱՆԳՆԵՑԱՒ / ՎԷՄՍ ԱՅՍ
ԱՆՈՒԱՆԱԴՐՈՒԹԵԱՄԲ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ, ԶՈՐ ՀԻՄՆԱԴՐԵԱՑ ԱՅՐՆ ԱՅ ՀԱՅՐ /
ՍԱՐԳԻՍ ՀՈՌՈՄՈՍԻ ՎԱՆԱՑ ԱՌԱՋՆՈՐԴ, ԻՍԿ ՅԵՏ ԱՄԻ :Ա: ՓՈԽԻ ՅԱՇԽԱՐՀԷ
ՆԱԽՔԱՆ ԶԱՒԱՐՏՈՒՄՆ / ՍՈՐԱ, ԻՍԿ ՅԵՏ ԵԼԻՑ ՆՈՐ⌈Ա ԵՄ⌉ ⌈Հ⌉ԱՅՐ ՍՈՂՈ⌈ՄՈՆ,
ՀԱՅՐ ՆՈՐԻՆ ՀԱՐԱԶԱՏ ԵՒ Ժ⌈Ա⌉ՌԱՆԳ ՍՈՒՐԲ ՈՒԽՏԻՍ ԱՒԱՐՏԵՑ⌊Ի⌋: /
ՇՆՈՐՀԻՒՆ ԱՅ, ԶԿՆԻ :Ե: ԱՄԻ ՓՈԽՄԱՆ ԾՆՈՂԻ ԻՄՈՅ, ⌈Ի⌉ :ՑՄՋՁ: (6286) Ա⌈ՄԻ⌉
ԼԻՆԵԼՈՒԹԵԱՆ ԱՇ⌈ԽԱՐՀ⌉Ի ԵՒ ⌈**Ի ԱՌԱՋԻՆ**⌉ / ԳԱԼՍՏԵԱՆՆ ՔԻ :ՈՁԴ: (684)
ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆՍ ՀԱՅՈՑ :ՆԼԴ: (985) ԹՈՒԱԿ⌈ԱՆԻՆ⌉ ՀԱՅՈ⌈Ց Ի⌉ ՓԱՌՍ ՔԻ ԱՅ
ԽՈՍՏ⌈ՈՎԱՆՈՂՔ⌉ / ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆՆ, ՈՐՔ ՄՏԱՆԷՔ ԸՆԴ ԴՐՈՒՆՍ ՍՈՐԱ՝
ՅԻՇԵՍՋԻՔ Ի ՔՍ ԶԻՍ ԵՒ ԾՆՈՂՍ ԻՄ⌈ՈՅ ՍԱՐԳԻՍ⌉ / ԵՒ ԶԱՇԽԱՏՈՂՍ ՍՈՐԱ ԵՒ
ՏՐ ՔՍ ՀԱՍԱՐԱԿԱՑ ՈՂՈՐՄԵՑԻ Ե⌈Ւ ԱՒՐ⌉ՀՆԵՑ⌈Ի⌉ ԶՍ⌈**ՈՒՐԲ ՈՒԽՏՍ ԳՐԻԳՈՐԻ Ի**⌉ /
ԶԵՌՆ ՍԱՄԷՀԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԻ ԱԲԵՂԱՒ, ՅԻՇԵ⌊Ս⌋ՋԻՔ ԶԻՍ / Ի ՏՐ Ն ՄԵՐ ՅԻ
ՔՍ, ՈՐՈՒՄՆ ՓԱՌՔ ՅԱՎԻՏԵԱՆ ԱՄԷ⌊Ն⌋ ՇԻՆԵՑԱՒ:

**13.** Արձանագրության կենտրոնում, կլոր սկավառակին, արևի ժամացույցի շառավիղների մեջ թվեր ցույց տվող տառերն են.



ԱԲԳԴԵԶԷԸԹԺԱԲ

***Հրատ.*** Ջալալյանց, Ա, 222-223, Ալիշան, Շիրակ, 169, Գէորգեանց, 176, Ալ. Մանուչարյան, ՔՀՇՎ, 176-177:

***Ծանոթ.*** Առաջին տողից մնացել են սկզբի և վերջի մասերը միայն, մեջտեղում նորոգումների ժամանակ դրվել են 4 նոր և անգիր քարեր. հին քարերի չափերից դատելով նախապես այդ տեղում 2-3 հատ կարող էին տեղավորվել: Ալ. Մանուչարյանն այդ բացը լրացնում է ԵՒ ՅՈԳԵՒՈՐ ՏՆ ԽԱՉԿԱ - որը կարելի է ընդունելի համարել: 6, 7, 8, 9 տողերի վերջին մասերից ևս մեկ քար փոխված է, դրանցից առաջինում մեկ բառ պիտի լիներ, հավանաբար ՓՐԿԱՐԱՐ կամ ՓԱՌԱՒՈՐ:

Յոթերորդը հեշտությամբ լրացվում է՝ ԽՈՍՏ[ՈՎԱՆՈՂՔ], ութերորդում ԾՆՈՂՆ բառից հետո պիտի լիներ Սողոմոնի հոգևոր կամ արյան հոր անունը: Ալ. Մանուչարյանը ենթադրում է հոգևոր հայր Սարգիսը:

Իններորդ տողում պակասող մասն ավելի մեծ է: Ալ. Մանուչարյանի հավելումը՝ ՁՍՈՒՐԲ ՈՒԽՏՍ ԳՐԻԳՈՐԻ հավանական չենք համարում:

Տասնմեկերորդ տողի ԱՄԷՆ բառից հետո կա ևս մեկ բառ, որը լուսանկարի վրա չի երևում, մեր օրագրի մեջ նշանակել ենք ՇԻՆԵՑԱՒ:

Արձանագրության վերջին երկու տողերը, փաստորեն, առանձին և անկախ են, այն սկսվել է խաչանշանով և ավելի ներսից և ճարտարապետ Սամեհանի հիշատակագրությունն է:

Արձանագրությունը գրվելուց առաջ նրա կենտրոնի մի քարի վրա փորագրված է եղել արևի ժամացույց, որը շրջանցելով գրվել է արձանագրությունը:

Արձանագրության աջ կողմի ներքևում քանդակված է երախը բաց առյուծ:

Այս արձանագրությունը միակն է, ուր կառուցող վարպետն իրեն ճարտարապետ է կոչում:

Հուշարձանը հիմնադրել է Հոռոմոսի վանահայր Սարգիսը և մեկ տարի հետո այն չավարտած մահացել է 979 թվի մոտ. շինարարությունն ավարտել է նրան հաջորդած Սողոմոնը՝ 985 թվին, ասել է՝ շինարարությունը տևել է 7-8 տարի:

Հին հրատարակությունները շատ թերի են (խոսքը, թերևս վերաբերում է առաջին երկուսին):

*Առաջին տողում շեղատառով վերականգնումը Ալ. Մանուչարյանինն է, ինչի հետ համաձայն է Ս. Բարխուդարյանը: Իններորդ տողում ԱՒՐՀՆԵՑԻ բառում Հ տառից հետո փորագրված է Ը կամ Ր, ստորին մասը եղծված: Վերջին տողում ՅԱՎԻՏԵԱՆ բառում, երկրորդ Ա-ի փոխարեն գրիչը փորագրել է Ս: Վերջում, իրոք, գրված է ՇԻՆԵՑԱՒ, ինչը, կարծես չի մերվում բովանդակությանը:*

**14. ԿԱՐՄԻՐ ՎԱՆՔ ԵԿԵՂԵՑԻ.** հարավային պատի ստորին մասում, արտաքուստ, 2 տող.



ԵՄ ԳՈՒԼԱՋԸԶԻ ՈՐԴԻ ՏՐ ՄԵԼԻՔՍԵԹԸՍ, /
ՈՐ ԵԿԻ ԱՅՍ ՄԲ ՈՒԽՏԻՍ ԾԱՌԱՅՑԻ:

***Ծանոթ.*** *Ս.Բարխուդարյանը Մելիքսեթի հոր անունը կարդացել է ԴՈՒԼ ԱՋԸԶ, իսկ ՈՒԽՏԻՍ-ը՝ ՈՒԽՏՍ: Դատելով տառաձևերից՝ հարազատ է XI-XII դդ.:*

***15. ԿԱՐՄԻՐ ՎԱՆՔ ԵԿԵՂԵՑԻ.*** արևմտյան պատի հյուսիսային անկյունում նորոգումների ժամանակ հարմարեցված բեկորներ, արձանագրության մնացորդներով, 1 տող.




... ԲԻՆ... ՍԱՐԳԻՍ ԲՐ ՄԱՆՈՒԿ...:

***Ծանոթ.*** Երկու բեկորների վրա մնում են երկրորդ տողի վերին գծերը:

*Նշվածները տառերի վերին գծերը չեն, այլ ուղղահայաց գծերով քանդակազարդ:*